

**«ԷՅ ԲԻ ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱԼԱՏ»
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅՈՒՆ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

ՆԱԽԱՔԱՆ

Սույն փաստաթուղթը հանդիսանում է «Էյ Բի Գործարարության Պալատ» իրավաբանական անձանց միության կանոնադրությունը և ընդունվում է Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքին համաձայն:

ԳԼՈՒԽ Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Պալատի կարգավիճակը

- 1.1. «Էյ Բի Գործարարության Պալատ» իրավաբանական անձանց միությունը (այսուհետ՝ Պալատ) ոչ առևտրային կազմակերպություն է, որը ստեղծվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի պահանջներին համապատասխան: Պալատը ստեղծվում է սույն կանոնադրության 2-րդ հոդվածի շրջանակներում Պալատի անդամների շահերը ներկայացնելու և նպատակներն իրականացնելու համար:
- 1.2. Պալատի անդամները պահպանում են իրենց ինքնուրույնությունը և իրավաբանական անձի իրավունքները: Պալատը հանդիսանում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացած շահույթը մասնակիցների միջև չբաշխող ոչ առևտրային, ապաքաղաքական կազմակերպություն, որն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, հաշիվներ բանկերում: Պալատն ունի կլոր կնիք իր անվանումով (հայերեն, և անգլերեն լեզուներով) և խորհրդանիշով: Միությունն ունի նաև դրոշմակնիք և իր խորհրդանիշով ձևաթուղթ:
- 1.3. Անդամների կողմից Պալատին հանձնված գույքը Պալատի սեփականությունն է: Պալատն այդ գույքն օգտագործում է իր կանոնադրությամբ սահմանված նպատակներով:
- 1.4. Պալատը պատասխանատու չէ իր անդամների պարտավորությունների համար:
- 1.5. Պալատի լրիվ անվանումն է՝
«Էյ Բի Գործարարության Պալատ» իրավաբանական անձանց միություն,
“A B Business Chamber” Union of Legal Entities,
Պալատի կրճատ անվանումն է՝
«ԷԲԳՊ» իրավաբանական անձանց միություն,
“ABBC” Union of Legal Entities:
- 1.6. Ընկերության գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք, Երևան, Նալբանդյան 49, բն. 5:
- 1.7. Պալատի անդամներն իրավունք ունեն անհատույց օգտվել նրա ծառայություններից, եթե այլ բան նախատեսված չէ Պալատի խորհրդի որոշմամբ:

ԳԼՈՒԽ Բ. ՊԱԼԱՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԳՈՐԾԱՐՈՒՅԹՆԵՐԸ

Հոդված 2. Պալատի նպատակները և խնդիրները

- 2.1. Պալատի ստեղծման և գործունեության հիմնական նպատակն է օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված լիազորությունների շրջանակներում իր անդամների ընդհանուր շահերի և իրավունքների պաշտպանությունը և դրանց ներկայացումը Հայաստանի Հանրապետության և Մեծ Բրիտանիայի պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ փոխհարաբերություններում:
- 2.2. Պալատի խնդիրներն են՝
 - ա) Հայաստանի տնտեսության զարգացմանը և այն միջազգային տնտեսական համակարգին ինտեգրացնելուն նպաստելը.
 - բ) ձեռնարկատիրության բոլոր ձևերի համակողմանի և ներդաշնակ զարգացմանն օժանդակելը.

- գ) Մեծ Բրիտանիայի և այլ օտարերկրյա պետությունների ձեռնարկատերերի հետ առևտրատնտեսական և գիտատեխնիկական կապերի ամրապնդմանն աջակցելը.
- դ) ձեռնարկատիրական գործունեության համար բարենպաստ միջավայրի ձևավորմանը նպաստելը.
- ե) պետության կողմից սահմանված գերակայություններին համապատասխան ձեռնարկատիրական գործունեության տարածքային զարգացմանը նպաստելը.
- զ) Պալատի անդամների, ինչպես նաև նրանց և պետական մարմինների միջև համագործակցության հաստատումը.
- է) Հայաստանի Հանրապետությունում ձեռնարկատիրության ոլորտի կադրերի պատրաստման, վերապատրաստման և որակավորման բարձրացման համակարգի կայացմանն ու զարգացմանն աջակցելը, այդ բնագավառում ծրագրերի մշակմանն ու իրականացմանը մասնակցելը.
- ը) անհատ ձեռնարկատերերին, առևտրային կազմակերպություններին, միություններին և ասոցիացիաներին տեղեկատվական և խորհրդատվական ծառայություններ մատուցելը, ձեռնարկատիրության տեղեկատվական սպասարկման ենթակառուցվածքների կազմավորմանն աջակցելը.
- թ) ձեռնարկատիրությանն աջակցող ենթակառուցվածքների ստեղծմանն ու զարգացմանը նպաստելը:

Հոդված 3. Պալատի գործառույթները

3.1. Պալատը՝

- ա) պետական և ոչ պետական մարմիններում, հիմնարկներում և կազմակերպություններում ներկայացնում և պաշտպանում է անդամների օրինական շահերը.
- բ) Հայաստանյան և Բրիտանական ձեռնարկությունների միջև կապերի հաստատման համար անհրաժեշտ միջոցառումների կազմակերպումն ու անցկացումը,
- գ) անդամների և Պալատի գործունեության վերաբերյալ տեղեկությունների տարածումը,
- դ) իր խնդիրների իրագործմանն ուղղված միջոցառումների կազմակերպումն ու անցկացումը,
- ե) օրենսդրությամբ սահմանված կարգով հիմնում և հրատարակում է թերթեր, ամսագրեր և այլ տպագիր նյութեր.
- զ) աջակցում է իր անդամների կողմից արտադրված ապրանքների և ծառայությունների արտահանման, օտարերկրյա իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ առևտրատնտեսական և գիտատեխնիկական համագործակցության ձևավորմանը և ամրապնդմանը:

ԳԼՈՒԽ Գ. ՊԱԼԱՏԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ

Հոդված 4. Անդամակցության տեսակները

4.1. Պալատում ձևավորվում է «Էյ», «Բի» և «Սի» տեսակների անդամակցություն:

4.2. Պալատի անդամ կարող է դառնալ ցանկացած իրավաբանական և ֆիզիկական անձ, ով Պալատի Անդամակցության կոմիտեի հիմնավորված կարծիքով՝

(ա) կիսում է Պալատի սույն կանոնադրությամբ և Պալատի ներքին փաստաթղթերով սահմանված նպատակները,

(բ) կարող է համապատասխանել Պալատի սույն կանոնադրությամբ և Պալատի ներքին իրավական ակտերով սահմանված չափանիշներին (ներառյալ կարգապահական կանոններին):

Պալատին անդամակցող ոչ առևտրային կազմակերպություններին և ֆիզիկական անձանց շնորհվում է դիտորդ անդամի կարգավիճակ: Պալատի դիտորդ անդամների Պալատի կառավարմանը մասնակցելու կանոնները սահմանվում են սույն կանոնադրությամբ և Պալատի ներքին իրավական ակտերով:

4.3. Պալատի անդամ դառնալու համար սույն Կանոնադրության 4.2. կետի պահանջներին համապատասխանող կազմակերպությունները պետք է Պալատին ներկայացնեն անդամակցության փաթեթը, որը ներառում է՝
(ա) Պատշաճ կերպով լրացված անդամակցության հայտը,
(բ) կազմակերպության կանոնադրության պատճենը,
(գ) կազմակերպության լիազորված ներկայացուցչի (ներկայացուցիչների) մասին տեղեկությունների ձևաթուղթը,
(դ) Պալատին անդամակցելու վերաբերյալ կազմակերպության կառավարման համապատասխան մարմնի որոշումը:
Անդամակցության փաթեթը Պալատին ներկայացնելու մանրամասն կարգն ու բովանդակությունը սահմանվում է Պալատի Տնօրենների խորհրդի կողմից:

4.4. Անդամակցության թեկնածուին հաստատելու վերաբերյալ որոշումն ընդունում է Պալատի Անդամակցության կոմիտեն: Անդամակցությունը հաստատվում է տարեկան կտրվածքով:

4.5. Անդամակցող կազմակերպությունը Անդամակցության կոմիտեի կողմից որոշում կայացնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում պետք է ստորագրի անդամակցության պայմանագիրը:

4.6. Տարվա ընթացքում Անդամակցության մեկ տեսակից մեկ այլ տեսակի անցնելու նկատմամբ կիրառվում են սույն հոդվածի կանոնները:

Հոդված 5. Անդամակցության դադարեցումը

5.1. Պալատի անդամի անդամակցությունը կարող է դադարեցվել Պալատի անդամի դիմումի հիման վրա կամ Պալատի նախաձեռնությամբ:

5.2. Պալատի անդամի նախաձեռնությամբ անդամությունը դադարեցնելու համար անդամը պետք է Պալատի գլխավոր տնօրենին ներկայացնի Պալատի ներքին իրավական ակտերի պահանջներին համապատասխան կազմված անդամությունը դադարեցնելու մասին դիմում:

5.3. Պալատի անդամի անդամակցությունը Պալատի նախաձեռնությամբ դադարեցումն իրականացվում է Պալատի Գլխավոր տնօրենի կամ Պալատի Տնօրենների խորհրդի նախագահի նախաձեռնությամբ՝ Անդամակցության կոմիտեին ներկայացված դիմումի հիման վրա:

5.4. Պալատի անդամի անդամացությունը Պալատի նախաձեռնությամբ դադարեցվում է Անդամակցության կանոնակարգով նախատեսված դեպքերում, ժամկետներում և կարգով:

5.5. Անդամակցության դադարեցնելու մասին դիմումը ստանալու պահից տասն աշխատանքային օրվա ընթացքում Ընկերության գլխավոր տնօրենը գումարում է Անդամակցության կոմիտեի նիստ:

5.6. Անդամի անդամակցության դադարեցման վերաբերյալ որոշումը կայացնում է Անդամակցության կոմիտեն՝ Անդամակցության կանոնակարգով նախատեսված կարգով և ժամկետներում:

Հոդված 6. Պալատի անդամների իրավունքներն ու պարտականությունները

6.1. Պալատի անդամներն իրավունք ունեն՝
ա) ընտրել և ընտրվել պալատի ղեկավար մարմիններում.
բ) պալատի գործունեության վերաբերյալ Պալատի կառավարման համապատասխան մարմինների քննարկմանը ներկայացնել առաջարկություններ՝ սույն կանոնադրությամբ սահմանված կարգով.

- զ) արտոնյալ պայմաններով կամ անվճար օգտվել պալատի կողմից մատուցվող ծառայություններից.
- դ) օգտվել պալատի ներքին իրավական ակտերով և անդամակցության համաձայնագրով նախատեսված իրավունքներից:

6.2. Պալատի անդամները պարտավոր են՝

- ա) կատարել պալատի ղեկավար մարմինների կողմից ընդունված պալատի կանոնադրական խնդիրներին վերաբերող որոշումները.
- բ) վճարել անդամավճարներ.
- գ) նպաստել պալատի կանոնադրական խնդիրների իրականացմանը.
- դ) կատարել պալատի կանոնադրությամբ սահմանված այլ պարտականություններ,
- ե) պահպանել Պալատի ներքին իրավական ակտերի պահանջները:

Հոդված 7. Անդամավճարը

- 7.1. Անդամակցության յուրաքանչյուր տեսակի համար անդամավճարի չափը հաստատվում է Պալատի Տնօրենների խորհրդի կողմից ֆինանսական տարվա ավարտից 45 օրվա ընթացքում:
- 7.2. Պալատին անդամակցելու առաջին տարվա համար անդամակցության վճարը վճարվում է անդամակցության պայմանագիրը ստորագրելու օրվանից 5 օրվա ընթացքում:

ԳԼՈՒԽ Դ. ՊԱԼԱՏԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Հոդված 8. Պալատի կառավարման մարմինները

8.1. Պալատի կառավարման մարմիններն են՝

- (ա) Պալատի ընդհանուր ժողովը,
- (բ) Պալատի Տնօրենների խորհուրդը,
- (գ) Պալատի Գլխավոր տնօրենը,
- (դ) Պալատի Կոմիտեները:

8.2. Պալատի կառավարման բարձրագույն մարմինը ընդհանուր ժողովն է, որը գումարվում է տարին մեկ անգամ:

8.3. Ընդհանուր ժողովի գումարման ժամանակի, տեղի և օրակարգի մասին համագումարի բացումից առնվազն մեկ ամիս առաջ պալատի Գլխավոր Տնօրենը այդ մասին տեղյակ է պահում պալատի անդամներին: Պալատի Ընդհանուր ժողովի գումարման և անցկացման կարգը սահմանվում է Ընդհանուր ժողովի կողմից:

8.4. Համագումարը՝

- ա) հաստատում է Պալատի կանոնադրությունը, փոփոխություններ է կատարում դրանում.
- բ) հաստատում է Պալատի Տնօրենների խորհուրդի կազմը,
- գ) վաղաժամկետ դադարեցնում է Տնօրենների խորհրդի անդամների լիազորությունները,
- զ) հաստատում է Պալատի ծրագրերը և գործունեության ուղղությունները,
- դ) լսում և գնահատում է Պալատի Տնօրենների խորհրդի հաշվետվությունները,
- ե) հաստատում է Պալատի Տնօրենների խորհրդի գործունեությունը կարգավորող ներքին իրավական ակտերը,
- զ) հաստատում է Տնօրենների խորհրդի գործունեության տարեկան ծրագիրը,
- է) հաստատում է Պալատի ընդհանուր ժողովի գումարման և անցկացման կարգը:

8.5. Պալատի անդամների, Տնօրենների խորհրդի անդամների ընդհանուր թվի առնվազն կեսի նախաձեռնությամբ կարող է հրավիրվել արտահերթ Ընդհանուր ժողով:

8.6. Ընդհանուր ժողովում քննարկվող հարցերը լուծվում են ներկա գտնվող անդամների ներկայացուցիչների ձայների պարզ մեծամասնությամբ, իսկ պալատի կանոնադրության հաստատման, փոփոխման հարցերը՝ ամսվազն երկու երրորդով:

8.7. Ընդհանուր ժողովի քվորումը նրա անդամների ներկայացուցիչների երկու երրորդն է:

Հոդված 9. Պալատի Տնօրենների խորհուրդը և Գլխավոր տնօրենը

9.1. Պալատի Տնօրենների խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ) իրականացնում է Պալատի գործունեության ընդհանուր ղեկավարումը՝ բացառությամբ այն հարցերի, որոնք օրենքով և կանոնադրությամբ վերապահված են Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը:

9.2. Պալատի խորհրդի անդամներն ընտրվում են տարեկան Ընդհանուր ժողովում 1 տարի ժամկետով:

9.3. Պալատի խորհուրդը բաղկացած է 7 անդամից: Խորհրդի կազմում ներգրավվում է անդամների «Էյ» խմբից 2 անդամ, անդամների «Բի» խմբից 1 անդամ, «Սի» խմբից 1 անդամ, Գլխավոր Տնօրենը, խորհրդի անկախ անդամը, Պալատի մեկ անդամ հասարակական կազմակերպություն: Այն դեպքում, երբ Խորհուրդը ձևավորելու պահին որևէ խմբի անդամ Պալատի անդամների ցանկում չկա, նրան փախարհինում է մյուս (հաջորդ) խմբի անդամներից մեկը:

9.4. Խորհրդի անդամների լիազորությունների ընդհանուր տևողությունը չի սահմանափակվում: Խորհրդի անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում՝ խորհրդի անդամների նոր ընտրությունը իրականացվում է արտահերթ ժողովների գումարմամբ: Ընտրությունը կատարվում է նույն ընթացակարգով, ինչպես և տարեկան ընդհանուր ժողովում խորհրդի անդամների ընտրությունն է, համաձայն ընդհանուր ժողովի կողմից հաստատված ժողովի նախապատրաստման և վարման կարգի:

9.5. Խորհրդի անդամները չեն վարձատրվում:

9.6. Խորհրդի բացառիկ իրավասություններն են՝

ա) Պալատի գործունեության հիմնական ուղղությունների որոշումը, ներառյալ՝ Պալատի հեռանկարային զարգացման ծրագրի հաստատումը.

բ) ընդհանուր ժողովի տարեկան և արտահերթ նիստերի գումարում, օրակարգի հաստատում, ինչպես նաև դրանց գումարման և անցկացման կազմակերպման հետ կապված՝ նախապատրաստման աշխատանքների իրականացման ապահովումը.

գ) Պալատի Գլխավոր Տնօրենի, Ֆինանսական Տնօրենի և Գլխավոր Հաշվապահի նշանակումը, նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը.

դ) Պալատում ներքին հսկողության ստանդարտների սահմանումը,

ե) Պալատի տարեկան ծախսերի նախահաշվի ու կատարողականի հաստատումը.

զ) Պալատի ներքին վարչակազմակերպական կառուցվածքի և աշխատատեղերի հաստատումը.

է) Պալատի տարեկան ֆինանսական հաշվետվությունների նախնական հաստատումը և ընդհանուր ժողովին ներկայացումը.

ը) ընդհանուր ժողովի հաստատմանը Պալատի արտաքին աուդիտն իրականացնող անձի ներկայացումը.

թ) Պալատի արտաքին աուդիտն իրականացնող անձին վճարման չափի սահմանումը.

ժ) Պալատում իրականացված աուդիտորական կամ այլ ստուգումների արդյունքում անհրաժեշտության դեպքում բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների նախաձեռնումն ու դրանց իրականացման վերահսկումը.

ժա) Պալատի կողմից օրենքով սահմանված գործառնությունների իրականացման կարգը սահմանող ներքին իրավական ակտերի ընդունումը.

**«ԷՅ ԲԻ ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱԼԱՏ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅՈՒՆ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

ժբ) Պալատի հաշվապահական հաշվառման քաղաքանության՝ հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու նպատակով կիրառվող սկզբունքների, հիմունքների, եղանակների, կանոնների, ձևերի և կարգերի սահմանումը.

ժգ) Պալատի պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը.

ժե) Պալատի կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը,

ժզ) առևտրային կազմակերպությունների հիմնադրում և մասնակցություն,

ժէ) իրականացնել օրենսդրությամբ սահմանված այլ իրավասություններ:

9.7. Պալատի խորհրդի նիստերը հրավիրվում են նրա նախագահի կամ տեղակալի կողմից առնվազն երկու ամիսը մեկ անգամ:

9.8. Պալատի խորհրդի նիստերը գումարում է Պալատի խորհրդի նախագահը՝ իր, Պալատի խորհրդի անդամի, Գլխավոր տնօրենի, պալատի արտաքին աուդիտն իրականացնող անձի գրավոր պահանջով:

9.9. Պալատի խորհրդի նիստն իրավասու է (քվորում ունի), եթե նիստում մասնակցում են խորհրդի անդամների կեսից ավելին: Պալատի խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում խորհրդի նախագահի ձայնը որոշիչ է: Խորհրդի նիստերին Խորհրդի անդամ չհանդիսացող անձանց մասնակցությունը կարգավորվում է ընդհանուր ժողովի կողմից հաստատված Խորհրդի կանոնակարգով և որոշումներով:

9.10. Խորհրդի նախագահը.

ա) ընտրվում է Պալատի խորհրդի անդամների կողմից, խորհրդի անդամների կազմից՝ ձայների մեծամասնությամբ,

բ) կազմակերպում է Պալատի խորհրդի աշխատանքները, (հրավիրում է խորհրդակցություններ, իր իրավասության շրջանակներում տալիս է հանձնարարականներ),

գ) գումարում և նախագահում է Պալատի խորհրդի նիստերը,

դ) կազմակերպում է խորհրդի նիստերի արձանագրության վարումը,

ե) նախագահում է Պալատի ընդհանուր ժողովներում,

զ) կնքում է Պալատի Գլխավոր տնօրենի հետ պայմանագրեր,

Խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները կատարում է Պալատի խորհրդի նախագահի տեղակալը:

Պալատի խորհրդի գործունեությունը իրականացվում է ընդհանուր ժողովի կողմից հաստատված խորհրդի կանոնակարգի համաձայն:

9.11. Պալատի Գլխավոր տնօրենը, որպես իր բացառիկ իրավասություն, ներկայացնում է Պալատը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում, Պալատի անունից կնքում է գործարքներ, գործում է պալատի անունից առանց լիազորագրի, տալիս է լիազորագրեր:

9.12. Գլխավոր տնօրենը.

ա) տնօրինում է Պալատի գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները, իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

բ) աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Պալատի աշխատակիցներին,

գ) Պալատի աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ,

դ) լուծում է սույն կանոնադրությամբ իրեն վերապահված այլ հարցեր, իր իրավասության շրջանակներում իրականացնում այլ գործառնություններ:

ե) խորհրդի հաստատմանն է ներկայացնում Պալատի խորհրդի կողմից հաստատվող ներքին իրավական ակտերը, Պալատի վարչակազմակերպական կառուցվածքը.

- գ) ապահովում է ընդհանուր ժողովի և խորհրդի որոշումների կատարումը,
- է) իրականացնում է Պալատի գործունեության ընթացիկ ղեկավարումը,
- ը) կազմակերպում է ընդհանուր ժողովի, Պալատի խորհրդի և իր կողմից ընդունված որոշումների կատարումը,
- թ) իր իրավասության շրջանակներում սահմանում է Պալատի կողմից կատարվող գործառնությունների սակագները, հաշվառումն ու հաշվետվությունը և իրականացնում է դրանց վերահսկողությունը,
- ժ) վերահսկում է օրենսդրության պահպանումը Պալատում,
- ժա) քննարկում է վերստուգումների, ստուգումների նյութերը,
- ժբ) հաստատում է Պալատի աշխատողների իրավունքների ու պարտականությունների մասին հրահանգները,
- ժգ) կատարում է Պալատի պաշտոնատար անձանց նշանակում իր իրավասության շրջանակներում,

Հոդված 10. Պալատի կոմիտեները

- 10.1. Պալատում կարող են ձևավորվել կոմիտեներ, որոնք պատասխանատու են լինելու խորհրդի կողմից որոշված ուղղությունների համար:
- 10.2. Պալատում ձևավորվում են մշտական և ժամանակավոր կոմիտեներ: Պալատում ձևավորվում է Անդամակցության մշտական կոմիտե: Անդամակցության կոմիտեի կազմի, լիազորությունների, գործունեության կարգի և պայմանների կանոնները հաստատվում են Պալատի խորհրդի կողմից:

Հոդված 11. Պալատի գործունեության վերահսկողությունը

- 11.1. Յուրաքանչյուր տարի Պալատի ֆինանսատնտեսական գործունեության ստուգումն իրականացվում է արտաքին աուդիտի կողմից: Պալատի արտաքին աուդիտն իրականացնող անձը ընտրվում է մրցույթով՝ համաձայն գործող կարգի և հաստատվում է ընդհանուր ժողովի կողմից:
- 11.2. Պալատի ֆինանսատնտեսական գործունեության ստուգումն արտաքին աուդիտի կողմից կարող է իրականացվել նաև Պալատի «Ա» տեսակի անդամների 25 տոկոսի սեփականատերերի պահանջով, որոնք ընտրում են արտաքին աուդիտ իրականացնող անձին, վճարելով նրա ծառայությունների դիմաց: Ընդ որում նրանք կարող են Պալատից պահանջել իրենց կատարած ծախսերի հատուցում, եթե այդ ստուգումն ընդհանուր ժողովի որոշմամբ արդարացված է եղել Պալատի համար: Պալատի արտաքին աուդիտ ցանկացած ժամանակ կարող է հրավիրվել նաև խորհրդի կողմից՝ Պալատի միջոցների հաշվին:
- 11.3. Պալատի խորհուրդը ձևավորվում է Պալատի պետական գրանցման օրվանից 45 օրվա ընթացքում:

ԳԼՈՒԽ Ե. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 12. Պալատի լուծարումը

- 12.1. Պալատի լուծարման դեպքում նրա գույքն ուղղվում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, իսկ դրա անհնարինության դեպքում փոխանցվում է պետական բյուջե: